

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

1.1.1. 2001թ. հունվար-փետրվարի ՀՆԱ ցուցանիշը

Հանրապետությունում 2001թ. հունվար-փետրվարին համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) արտադրությունը կազմել է 94417.2 մլն.դրամ, որը գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի մակարդակը 12205.0 մլն.դրամով: ՀՆԱ-ի աճի տեմպը ընթացիկ տարվա հունվար-փետրվարին 2000թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 111.0 %, 2000թ. հունվար-փետրվարի 101.4% աճի դիմաց:

Հարկ է նշել, որ հանրապետությունում նկատվել են զգալի դրական փոփոխություններ ապրանքներ արտադրող և ծառայություններ մատուցող բազային ճյուղերում: Այս ճյուղերում 2001թ. հունվար-փետրվարին ստեղծվել է ՀՆԱ-ի (հիմնական գներով) 77.3%-ը՝ նախորդ տարվա հունվար-փետրվարի 75.7%-ի դիմաց:

Արձանագրվել է տնտեսության առաջատար ճյուղերի ավելացված արժեքի զգալի աճ նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ՝ արդյունաբերության ճյուղում՝ 111.4%, 2000թ. հունվար-փետրվարի 101.0% աճի դիմաց, շինարարության ճյուղում, համապատասխանաբար՝ 112.0 և 88.1%, գյուղատնտեսության ճյուղում՝ 100.2 և 99.5%, առևտրի և հանրային սննդի ճյուղում՝ 113.5 և 114.5%, տրանսպորտի և կապի ճյուղում՝ 106.5 և 105.6 %: Միաժամանակ արձանագրվել է նաև անուղղակի հարկերի զգալի աճ:

Արտադրված ՀՆԱ կառուցվածքը

տոկոսներով ընդամենի նկատմամբ

	2001թ. հունվար-փետրվար	2000թ. հունվար-փետրվար
<i>ՀՆԱ-ն ընթացիկ գներով</i>	100	100
այդ թվում		
ապրանքներ	44.4	44.9
ծառայություններ	39.7	41.6
ապրանքների և ներմուծման զուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	15.9	13.5